Ի պատասխան «Իրավաբան.նեթ» լրատվական կայքի 2015 թվականի հուլիսի 7-ին Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով հասցեագրած գրավոր հարցման հայտնում ենք.

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պատվիրակությունը, որի կազմում Հանձնաժողովից ընդգրկված են եղել Հանձնաժողովի նախագահը և երեք անդամներ (պատվիրակության կազմում ներկայացված են եղել պետական այլ մարմինների ներկայացուցիչներ ևս), 2015 թ. ապրիլի 29-ից մայիսի 1-ը ԱՄՆ Վաշինգտոն քաղաքում մասնակցել է Համաշխարհային բանկի կողմից կազմակերպված «Շահերի բախման, գույքի և եկամուտների հայտարարագրերի կարգավորումները Հայաստանի հանրային ծառայության ոլորտում» թեմայով սեմինարին, որում ներկայացվել և քննարկվել են հայտարարագրման համակարգի հայաստանյան խնդիրները (մասնավորապես՝ հայտարարագրեր չներկայացնելու կամ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու, ակնհայտ կեղծ կամ թերի տվյալների ներկայացման համար պատասխանատվության բացակայությունը, շահերի բախման իրավակարգավորումների անկատարությունը, հայտարարատուների և փոխկապակցված անձանց շրջանակի սահմանափակ լինելը, հայտարարագրման ենթակա տվյալների վերլուծության մեթոդաբանության բացակայությունը, պետական այլ մարմինների բազաներում առկա տվյալների հետ համադրման մեխանիզմի անկատար լինելը, հայտարագրման ենթակա գործարքների շեմերի առկայությունը և և այլն) ու դրանց լուծման ուղիները, Հանձնաժողովի ձեռքբերումներն ու մարտահրավերները, ինչպես նաև հանրային էթիկայի ընդհանուր համակարգի զարգացման ընթացիկ նախաձեռնություններն ու հեռանկարները:

Նախաձեռնություններից, մասնավորապես, ներկայացվել են Հանձնաժողովի մասնակցությամբ մշակված օրենսդրական փոփոխությունների փաթեթը՝ հայտարարագրեր չներկայացնելու կամ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու, ակնհայտ կեղծ կամ թերի տվյալների ներկայացման համար պատասխանատվության միջոցներ սահմանելու համար, հայտարարագրերի՝ հրապարակայնացման ենթակա տվյալների շրջանակի ընդլայնումը, պետական այլ մարմինների բազաներում առկա տվյալների հետ առցանց համադրման մեխանիզմների ներդրումը, ռիսկերի հիման վրա վերլուծության մեթոդիկայի ստեղծումը և տվյալների ավտոմատ վերլուծության համակարգի զարգացումը:

2. Այցի շրջանակում Հանձնաժողովը հանդիպում է ունեցել Համաշխարհային բանկի կենտրոնական գրասենյակի Ֆինանսական բաժնի մասնագետների հետ, որի ընթացքում քննարկվել են հայտարարագրման էլեկտրոնային համակարգին, շահերի բախմանն առնչվող հարցեր, ինչպես նաև ՀԲ փորձագետների կողմից ներկայացվել են նաև գույքի և եկամուտների հայտարարագրերում պաշտոնյաների կողմից տվյալներ թաքցնելու կամ կեղծ տվյալ ներկայացնելու իրավիճակներում ձեռնարկվող անհրաժեշտ քայլերի միջազգային փորձը: Համաշխարհային բանկի փորձագետները ներկայացրել են նաև էլեկտրոնային հայտարարագրման համակարգի լավագույն փորձ ունեցող երկրների ցանկը (Արգենտինա, Ռումինիա,Սինգապուր և այլն) և ընդգծել են Հայաստանում հայտարարագրերի վերլուծության էլեկտրոնային համակարգ ներդնելու կարևորությունը:

Հանձնաժողովի անդամներին ընդունել է Հայաստանի, Բոսնիայի և Հերցեգովինայի, Բուլղարիայի, Խորվատիայի, Կիպրոսի, Վրաստանի, Իսրայելի, Մակեդոնիայի, Մոլդովայի, Մոնտենեգրոյի, Հոլանդիայի, Ռումինիայի և Ուկրաինայի տարածաշրջանի հարցերով գործադիր տնօրեն Ֆրանկ Հիմսկերկը: Հանդիպման ընթացքում վերջինս ներկայացրել է Համաշխարհային բանկի գործունեությունը տարածաշրջանում՝ կարևորելով արդար կառավարման, պետական հատվածի արդիականացման ուղղությամբ Հայաստանում տարվող աշխատանքները և դրանց հետագա շարունակման անհրաժեշտությունը:

Սեմինարի արդյունքներով որոշվել են «Պետական հատվածի արդիականացման 3-րդ ծրագրի» շրջանակներում Հանձնաժողովի գործառույթների վերանայմանը, ինչպես նաև էլեկտրոնային հայտարարագրման համակարգի հետագա բարելավմանը, այդ թվում նաև հայտարարագրերի էլեկտրոնային վերլուծության համակարգի ձևավորմանն ուղղված քայլերը:

3. Տեղեկացնում եմ, որ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի պաշտոնական կայքում (www.ethics.am) հրապարակվում են Հանձնաժողովին ներկայացված **բոլոր** հայտարարագրերը: Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրերի ռեեստրում բացակայում են միայն չներկայացված հայտարարագրերը: Հետևաբար, ռեեստրի միջոցով կարող եք դուրս բերել հայտարարագիր չներկայացած պաշտոնատար անձանց և նրանց փոխկապակցված անձանց ցանկերը:

4. Հայտարարագրերի ներկայացման ժամկետը նույնպես բաց տեղեկատվություն է և ռեեստրի միջոցով կարող եք տեղեկանալ հայտարարագիրը ուշ ներկայացրած պաշտոնատար անձանց և նրանց փոխկապակցված անձանց մասին:

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն օրենքով սահմանված պարտականության կատարման անհրաժեշտության մասին լրացուցիչ տեղեկացրել է բոլոր այն պաշտոնատար անձանց, որոնք չեն ներկայացրել հայտարարագիր, իսկ Հայտարարագրերը չներկայացնելու կամ սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավասություն Հանձնաժողովն առայժմ չունի: